

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

Խմբագրատուները բաց է առաջատեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
 իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի քանի բացատրություններ: ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ախալցխայից: Նամակ Սարազա-մշից: Նեղբուն լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Շաբաթ օրվայ պարահանդեսը: Արտաքին լուրեր:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ՄԼԵՐ Ժողովրդի հայեցակետը ընտրողական զործե-րում:

ՄԱ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի շարքում անցաւ այն օրից, երբ Քիշի
լիս հասաւ Կ. Պօլսի Կրօնական Համալսա-
ման Ժողովի կանգիւղատական ընտրութիւն-
ների հետեւանքների մասին հեռագիրը։
Այդ այնպիսի բովանդակութեան մի հե-
ռագիր էր, որը գրեթէ նոյնքան կապուրիշ
ազդեցութիւն արաւ Ներսէսի թեկնածութիւ-
նը պաշտպանողներին լրա, որքան նա կարող
էր յայտնելով անուցանել և Մակար սրբազա-
նի և թէ Մեքքիսեղեկ եպիսկոպոսի հաս-
ու կտոր բարեխօսներին։ Միայն թէ իրո-
ղութիւն է, որ իննսուռն և վեց հոգեւորա-
կաններից վաթսուռն և երեքը ձայն են տուած
Ներսէս պատրիարքին, մինչդեռ Մակար և
Մեքքիսեղեկ սրբազանները՝ առաջինը ստա-
ցել է յիսուռներեք, երկրորդը՝ յիսուռն և մէկ
ձայն։

Որքան և այդ եղելութիւնը նպատաւաւոր
կարելի է համարել մեր պաշտպանած դա-
տին, բայց և այնպէս երկար ընդարձակվե-
լայդ նիւթի վրա մեզ անտեղի է թուում
զանազան պատճառներով: Նախ, որ կան
ղեկատական ընտրութիւնները, որպէս մեզ
նից իւրաքանչիւրը աւելի փոքր ժողովնե-
րում անձամբ փորձելու առիթ ունեցած կը
լինի, յաճախ խաբուսիկ են լինում: Կարելի
է, որպէս կանգիդատ, ստանալ յիսուն երեք
կամ յիսուն և մէկ ձայն, իսկ բուն ընտրու-
ղութեան նիստում ստանալ միայն երեսուն
ձայն և աւելի քիչն անգամ: Երկրորդ, որ
բուն ընտրողութիւնը պիտի կատարվի ոչ
թէ նոյն Կրօնական ժողովում, այլ Ազգային
ժողովում, որի անդամների տրամադրու-
թիւնը ամեն տեսակ պատճառ ունենք նոյն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԷՏԵՐԸ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Հասարակութիւնների յառաջադիմութեան հետ միասին շատանում, և մինչև անգամ բազմապատկւում են այնպիսի հիմնարկութիւններ և օրէնքներ որոնք իրանց կողմից ստեղծում են զանազանապէս կերպ հասարակական պաշտօններ: Սա մի հասարակ, բայց հիմնական ճշմարտութիւն է մարդկային պատմութեան մէջ: Ամենքին յատնի կը վնասնկասեմ, որ վաղեմի ժողովուրդների մէջ, որտեղ կան միմիայն ցեղական բաժանմունքներ, գոյութիւն ունեն միմիայն ցեղապետներ, որոնցով սկսւում և վերջանում է այդպիսի ժողովուրդեան հասարակական պաշտօնների և իրաւունքների շըրջանը: Կիրակայւրենի ժողովրդոց մէջ դրան առնուում են մի քանի ուրիշները: Գրանից յետոյ երբ մի ժողովուրդ ուրք և կոխում մտաւոր-բարոյական յառաջադիմութեան անպարբիլ վրայ, ըստ ստեղծւում են մի շարք այնպիսի պաշտօններ, որոնք իրանց կողմից առաջ են կոչում ընդհանուր

չը համարելու, ինչ յայտնվեցաւ Կրօնա-
կան Համագումար ժողովում. նա՛ մանա-
ւանդ, որ Ազգային ժողովում տաճկա-հայոց
հոգեւոր Կաթը ներկայացրած է հազիւ մի
տասնեակ հոգեւորականներով, ուրեմն ընդ-
հանուր ներկայացումը եւս մի անկշան մա-
սով:

Բայց խոստովանելով Հանդերձ Արծնական
Ժողովի քուէի համեմատական նշանակու-
թիւնը միայն, մէնք ոչ կողգէինք այդ ա-
ռաջին յաղթանակը կատարեալ մոռացման
և անուշադրութեան յանձնված տեսնել և
ոչ էլ Ներսէսեանների պարտքը այժմեանից
իսկ կատարած ու վերջացրած համարել:

Մի տարուեց ի վեր յայտնի կարգի մար-
դիկ չեն դադարում պնդել, թէ Ներսէս
դրուիթիւնը Կ. Պօլսում կատարեալ խախտ-
ված է, թէ նա իր նախին ազդեցու-
թիւնը կորցրած է և թէ նա այլ ևս ոչ
մի հրապոյր չէ ներկայացնում պօլսեցիներին
աչքում: Համագումար Կրօնական ժողովի
անցեալ շաբաթվայ քուէն, սակայն ուղիւ
բաւական է այդ մարդկանց հակառակ
համոզմունքին բերելու համար իսկ եթէ
նա դեռ աւելի բան է ապացուցանում
այդ աւելորդի մասին խորհրդածիւլու աս-
պարեզը մենք սիրով թողնում ենք անմեղ
մտքեր յայտնելու սովոր պուրլիցիստներին
Մենք նախապատոււմ ենք անցնել այլ, ըստ
մեզ շատ աւելի կարեւոր, բայց ցայժմ դեռ
մուծը մնացած խնդիրներին, որոնք ուղղա-
կի կերպով պիտի հետաքրքրեն Ներսէս
կանդիդատութեան անշահախնդիր պաշտ-
պաններին: Նւ մենք համոզված ենք, որ
այս րոպէին անկեղծ և անաչառ քննադա-
տութեան, ուրեմն և պարզ խոստովանքնե-
րի պատրաստականութիւն կարելի է ըստ
պատել միմիայն Ներսէսեաններէց, որով
հետեւ իրանց դատին յաղթութիւն աս-
պահովելու համար նրանք ամենեւ-
եւին կարօտութիւն չունեն բան թաղցնելու
Ասված է, թէ noblesse oblige, բայց
նոյն իրաւամբ մենք կարող ենք ստել՝ ոյժ
պարտաւորացնում է, և մեր դատի հակա-

օգտվին ծառայելու պարտաւորված անձինք, այս պէս թէ այնպէս: Եւ այդ բնական է: Արդարեւ ձրտեղ է կառավարչական գրովիմընը աւելի շատ անձանց գործի հրաւիրում, եթէ ոչ լուսաւորեա ժողովրդող մէջ: Արտող է կեանք աւնում ընկե ղրդ, խեղճին օգնելու գաղափարը, եթէ ոչ զար ղրդեան հասարակովիմներին մէջ: Լուսաւորող ղրեան վրա գրովիմանպէս կանդմաճ հասարակ ղրովեան մէջ միայն ծնվում են մտաւորին, բա ղրդակամին, արծաեաւորին ձգտելու միտումներ, ահա այդպիսի գրովեան մէջ տոնկի նման բուս նում են բարենպատակ ընկելովիմները, բարե գործական հիմնարկովիմները, ապաստանարանն կարօտեալներին համար մտաւոր, կրովիմեան հիմ նարկովիմները, նիւթակաւ բարեխաւովեան հա մար սիստեմաները և այլն և այլն...

Իսկ այդ բոլորը իրանց հետ ընդում են չարքեր
լավ պաշտոններ, որոնք պահանջում են անձնա-
ւորություններ...: Միանպաստյան աւելորդ կը լինի
ի հարկէ, բացառել հասարակական պաշտոն-
ները զեան հշանակութիւնը, երբ մի մարդ կան-
խած է ծառայել ընդհանրիկ օգտին,—այդ
կիմբն ըստ կնքեան այդ պարզութամ է նրանից, որ
այդպիսիքը գոյութիւն են աւնում լուսաւորու-
թեան որոշ աստիճանի վրա, և երբ մարդիկ կար-

ռակորդները չափից դուրս լաւ գիտեն, [Թ] ուժը այս դիպուկաճումը որ կողմն է:

Մկենք նրանից, որ Ներսէսի թեկնածուն
 թեան հակառակորդները, սպառած լինե-
 լով ամեն ուրիշ համոզելու գէնք, աշխա-
 տում են ստորացնել այդ անձի նշանակու-
 թիւնը, մեղադրելով նրա պաշտպաններին
 մի տարօրինակ յանցանքի մէջ: Եւ այդ յան-
 ցանքը դիտէ՞ք ինչու՞ն է կայանում: Նրա-
 նում, որ նրանք, այդ պաշտպանները, իբր-
 թէ ոչինչ այլ պատճառ չունեն Ներսէսին
 նախապատուելու, քան այն հանգամանքը
 որ Ներսէսի անունը Մեղքիսեղեկ և Մակա-
 րբազաններից աւելի ժողովրդական է
 Հասարակաց կարծիք սասած բանը դառն է
 յայտնի գրողների բերանում մինախատական
 խօսք: Հասարակաց կարծիքի վրա հիմն-
 վել ուղղակի թարգմանվում է՝ սեպհակա-
 դատողութիւն չունենայ:

Սախայն շատ փոքրիկ կարծիք ունենալով է ընթերցողներին զարգացման աստիճանը վրա, ենթադրել, թե նրանք կը խաբվեն այդ տեսակ սովետադիմադրության, Պաշտոնի, որ, Ներսիսի նկատմամբ, հասարակաց կարծիքը առ ոչինչ համարվի, կը նշանակվա պարզ ի պարզոյ հրապարակական արհամարհանքի յանձնել այն բոլորը, ինչ տարիքի ներքոյ մի լրագիր աշխատած է ներշնչել հասարակութեան, որովհետեւ բոլորեքեանց մեզ հետ այս կոտորում միանգամայն համաձայն կը լինեն, որ, եթէ այսօրվայ օրս Ներսիսը մեզ մօտ ժողովրդական է, եթէ նա մեզ մօտ մեծ յարգանքի մէջ է, այդ բոլորը չնորհիւ մեր տեղական մամուլի: Ի՞նչ յարգանք կարող է վայելել մամուլը, եթէ ի տարիներով տօնախմբված անձին, սրա բոլոր ծառայութիւններով հանդերձ, պիտի ընդունակ լինի մօռանալ օրհասական բոլորէն: Ասում ենք մամուլը և հասկացէք այն բառը իր բովանդակ նշանակութեամբ և այն ժամանակ լաւ կը հասկացվի, թէ այդ ինչ պէս է պատահում, որ նոյն անձինք, որոնք այսօրվայ հասարակաց կարծիքի կազմակերպիչ իրանք մասն ունեցած են, այժմ արդէ

դրանում են տեսնել իրանց ըթից դէնը, և ծառայել ընդհանրութեան շահերին... Հայերիս մէջ եւս, այսօր արդէն գոյութիւն ունի մի շարք այսպիսի պաշտօններ, քանի որ մինքն արդէն ունենք մասաւոր, նիւսական կեանք, քանի որ մենք ունենք ընկերութիւններ, ունենք ընտրողական օրէնքներ, վրա հիմնված եկեղեցու պաշտօնեաներ և այլն... Այժմ մենք հարկաւոր ենք համարում քանի մասօր ասել, թէ քիչ հայեցակէտերով են ընտրվում ժողովրդեան կողմից մեր մէջ ընկերութեան անդամները, հոգաբարձօք, պատգամաւորներ, երեցիօխներ, երեսօխաններ և այլն և այլն, որ մէկ-մէկ ինքը ընթերցողը կարող է յետևել, կարգէն: Եթէ տականք դնենք ամէն կողմից եկող ձայներին, կը տեսնենք որ առհասարակ, դժգոյսութիւն կայ մեր մէջ ընտրողներին կողմից դէպ ընտրվածները: Ասում են այս ինչ ընկերութեան անդամները շատերը անհոգ են, այս ինչ ուսուցիչները հոգաբարձօք անպէտք են, այս ինչ երեցիօխը ուսուցիչ է, այն ինչ ժողովի երեսօխները քանի պէտք էն, այն ինչ քահանայ անարժան է և այսպիսի անվերջ գանդախներ:

Պարզ բան է, որ անյաջող ընտրութեան հետ
տեանքը միշտ վատ կը լինի: Ոչ ոք չէ կարող ու
բանալ, որ մեր մէջ այդ բոլորը հիմնված է ըն

Համարհելով նոյն այդ հասարակաց կարծիքը, իրանք իրանց են արհամարհում:

Այժմ, այլ բան է հեռեկել ամանդու-
թեամբ և սովորութեամբ արմատացած մի
ժողովրդական կարծիքին, որի մէջ քննադա-
տութիւնը ոչինչ մաս չէ ունեցած և այլ
բան է հեռեկել մի հասարակաց կարծիքին,
որը կազմվել է դրական իրողութիւնների
աղբեղութեան ներքոյ, իրողութիւնների,
որոնց պատմական նշանակութիւնը ամեն
մարդ բաւականաչափ ժամանակ է ունեցած
և գննել և չափել:

Մենք ի հարկէ հետու ենք մատակերաց,
 թէ այս բոլորով սպառված է ընտրողական
 խնդրի ներկայ դրութիւնը և մենք խոստա-
 նում ենք հետեւեալ անգամ ցոյց տալ, թէ
 ինչու ներկայ ժամանակում կաթողիկոսա-
 ընտրութիւնը չէ կարող կատարվել կատա-
 րեալ գիտակցութեամբ, ով և ուզում է
 լինի այդ կաթողիկոսացուն:

Ա. Արտախանեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԲԱՆ ԼԵՍԻ ԳԵՍԼՅԱՆԻՑ

Փետրվարի 27-ին

Երեկ Արարչիայի հայ հասարակությունը, գիր-
դական համայնքի ներկայացուցիչները հետ միա-
սին ընտրեցին ձայների առաելուկեամբ պատ-
գամաւոր պ. Կարապետ Մովսեանիննյն, որ
Թիֆլիսի և Թեմի պատգամաւորների հետ ընտրե-
լու հան թեմական մի ներկայացուցիչ (աշխարհակազմե-
րանից) ամենայն հայոց կաթողիկոսի ընտրու-
թեանը Էջմիածնում ամսականեւ համար: Մեկն
նոյն ժամանակ Արարչիան ցանկեթիւն յայտնեց
որ իր պատգամաւորը ձայն տայ թեմական ներ-
կայացուցիչ ընտրութեան ժամանակ ամենապա-
տիւ Դերեւս պատրիարքի կուսակցութեանը պատ-
կանող անձի: Օգտւելով խմբած ժողովրդի
ներկայութիւնը, վճռուեցան և հետեւել հարցերը
Մինչև 1881 թուականը մինք ունէինք «Աղքա-
տաց հոգաբարձութիւն» անուամբ մի տեսակ ան-
պարօնական հիմնարկութիւն, հաստատւած կա-
րապետ արքեպիսկոպոսի ժամանակից, որը ժողո-
վուրդի կամաւոր նուէրներով հոգւած էր քաղաքի
անօգնական աղքատների կարիքները. այլ և հոգա-

տրողական իրաւունքների վրա: Այստեղ պէտք է մի բան որոշել և պարզ հասկանալ:

Սեր Բէջ առհասարակ տրտնջում են կուսակցութիւնների դէմ: Օրինակի համար, այսպիսի միամիտները ցանկանում են, որ մի որ և է ընտրութեան ժամանակ ամենքը մի ցանկութիւն ունենան, որ է հարկէ անկարելի է: Այդպիսիք կուսակցութիւն վերափարկար են համարում, որ, է հարկէ, սխալվում են. այստեղ ՚ի հարկէ մի անհրաժեշտ պայման էլ էր. այն է, որ կուսակցութիւնները լինեն համոզուածներէ կարծիքների, զազաւախների և ուրիշ անձնական կայրկոյնների... Օրինակներով խօսենք:—Ընդունենք թէ ես մի որ և իցէ առեղ ուսուցիչ եմ Ուսումնարանի մէջ պիտի լինի հոգաբարձական ընտրութիւն: Ես ցանկանում եմ, ես քարոզում եմ, ես ջանք եմ անում, որ ընտրվի որ. կիրակարը: Այստեղ իմ չարժաւիթները երկու տեսակ կարող են լինել: Մէկը որ ես իմանալով մինչև անգամ, որ կիրակարը անօգտաւոր է, վառէ, բայց իմ չանքիւս, եմ նրկթական ե այլ անձնական օգուտներիս նրան համապատասխան գտնելով, նրա ընտրութեան համար կազմում եմ մի կուսակցութիւն: Մէկ էլ, կարող է լինել, որ ես համոզված նրա մեծ արժանաւորութիւնների համար, ե նրան ընտրելու աւելի շանուեր եմ

բարձրութիւնը վերոյիշեալ թուականից դարձաւ ցրեց իր իրական դրոշմակութիւնը պ. զաւառապետի հրամանով. այժմ հաստատովելով քայտեղ թիֆլիսի Հայոց Գաղափարական (Նիկեոյեթեան մի մասնաճիւղը, հասարակութիւնը զանկութիւն յայտնեց, որ ընկերութեան մէջ բացվի մի անուանին բաժին Աղբաւտաց հողաբարձութիւն) անունով տեղական աղբաւտներին օգնելու համար Տեղական բաժնի Գաղափարական ընկերութեան խորհուրդը յարգելով հասարակութեան ինքնիշխան, առաջարկեց ընտրել հասարակութեանը երկու անձ, իրեն հողաբարձութեան, որոնք միասնաբար ընկերութեան կողմից ընտրված մի անձին հետ, ինչ հողաբարձութեանը հայրենական ընդունակ և անհետեւ մասնակցին Աղբաւտաց հողաբարձութիւն անունով բաժնի դրոշմակութեան մէջ Հասարակութիւնը իր միջոց ձայնի առաւելութեամբ ընտրեց Գ. Գ. Աւետիս Աւետիսեանցին և Մկրտիչ Պրիկլեանցին։ Երկրորդ հարցն էր հետեւեալը. Աղբաւտայի ազգային երկու ուսումնարանները (մօտաւորապէս 1000 սաներով) նվաճական կողմից կառավարվում էին տեղաւոր ս. Փրկչի եկեղեցականական կալուածների եկամուտներով։ Զը նայելով, որ եկամուտը չէր բաւականացնում տեղական կարիքներին և պահանջներին, և իւրաքանչիւր տարի հարկւարտը մասնակցներ զրկվում էին համարակ հաստատեց տեղ և նվաճական միջոց չը բաւականանային պատճառով, այժմ առանց կանխապէս Աղբաւտայի հաճութիւնը առնելու, սրբապան թեմական առաջնորդը և թեմական վերապետը վճռում են, որ եկեղեցու եկամուտից մի հարցը ընտրել իւրաքանչիւր տարի յանձնվի Աղբաւտայի ուսումնարանին։ Այդ վճիռը տեղական հասարակութիւնը տրամադրեց և արժեքի բարձրացրեց թէ իր ծառ. ծառաւ թողած, ուրիշի ծառը չեն ջրում) և ուստի ընտրեց երեք պատգամաւորներ (քաղաքիս յաջորդ հայր Ամասարեանցին, պ. պ. Գիւնեւիտիս Աստուածատրեանցին և Կարապետ Մովսէսեանցին), որ նրանք միջնորդեն, բողոքեն ուր հարկն է իրանց իրաւունքը չը բռնաբարելու համար, որով թէ ուսումնարանները նստանում են, չը բաւականացնելով տեղական պահանջներին և թէ հարկւարտը մասնակցներին զրկում են հասարակ այդուհետից։

Պէտք է ասած, որ Աղբաւտայում մի հաղուադէպը կարելի էր համարել երեկոյան ժողովը. մօտաւորապէս 200 անձ, ամենը ողորկված խօսում, վճռում և դատում էին համերաշխութեամբ. եթէ միշտ այդ օրուայ տրամադրութեամբ ժողովներ կայանան հասարակական առկա մնացած շատ գործեր դուրս բերված և կատարված կը լինէին. դժբաղդարար միշտ այսպէս չէր լինում։ Մի քանիսն էլ վիճում էին կաթողիկոսական հարցի առիթով հետեւեալը։ Ռուսիոյ հայոց մամուլը շատ խօսեց, վիճեց, ուսման էլ դատաւարեցին, թէ Պոլսոյ Աղբաւտայ ժողովը բռնաբարում է ազգի կազմը. որ փոխանակ երեցիկանական քուէները մեղ զրկելու, նա ուղարկում է ուղղակի քուէներին հետեւեալը, այսինքն ընտրված կաթողիկոսացուի անունը։ Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի ձայնը Աղբաւտայ ժողովի 1/3 է կազմում. ուրեմն Պոլսոյ ընտրվածը ընտրված է և մեր քուէները ձայն չունենալ Անկը թէ այդ

ուղիղ է. բայց ինչպէս էր կարծում. միևնոյնը չէ վարվում թիֆլիսը իր թեմի հետ։ Անա տեսէք։ Թիֆլիսի իւրաքանչիւր եկեղեցի ընտրում է չորս պատգամաւոր, ընդամենը օրինակ 80 անձինք. իսկ զաւառը մի-մի պատգամաւոր. ուրեմն ինչ ձայն պէտք է ունենայ Աղբաւտայի մի պատգամաւորը 80-ի մէջ. եթէ համեմատենք մարդահամարի հետ, Թիֆլիսը իր 40 հազարով ընտրում է 80, ուրեմն Աղբաւտայի էլ իր 13 հազարով ընտրելու է 26 անձ. եկեղեցու թիւը մենք ունենք 4 եկեղեցիք, ուրեմն ընտրելու էինք 16։ Եթէ աւելցնենք թէ օրովեհտե կայ «խոտէլիկեցիկ», դարձեալ զայնք դարձ կարելի է թիֆլիսում, ուր աւելի լաւ ծանօթ է մեր ազգի կարիքներին և կաթողիկոսացուի լաւ և վառ յատկութիւններին, հետեւաբար և նրա ընտրութիւնը նպատակաւորաբար է լինում։ Միթէ Թիֆլիսի մի մարդը արժէ գաւառականի 26-ին. չը մոռանանք, որ Թիֆլիսի կին-սօսն էլ դարձապէս ենք դատում։

ՆԱՄԱԿ ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ

Մարտի 10-ին

«Նոր-Վարի» № 29-ում գրում են Սարի-Ղամիշից հետեւեալը։ «Սարի-Ղամիշում մօտ 100 տուն հայեր կան, որոնք մնում են առանց քահանայի, դպրոցի և այլն, և որի վրա սրբազան առաջնորդի ուղղորդութիւնն են դարձնում։ Ինչպէս երեւում է, պ. նամակագիրը գրելու վարժութիւնից զուրկ չէ և պարզ բան է, որ Սարի-Ղամիշի երեւելի անդամ չէ տեսել, այլ դրա գրութեան իր մտքի յղութիւնը պէտք է լինի։ Այսպիսիները ոչ միայն միջոցներ են հասարակութեան դադար, այլ, ոչ միայն անպատու են լրացրութիւնը, այլ և քայքայեցնում են ժողովրդին և ահա առանց տեսնելու, քննելու, որոշելու սեր սպիտակից, ամեն ոք իր քմաց համեմատ սկսում է դատել, և այս կամ այն ինչ անձնաւորութեան պատկեր գրելու։ Պ. թղթակցի վերին ծայր ստախոսութիւնը ստիպում է մեզ մի քանի խօսք աւելու իրողութիւնը ձեռնարկելու յայտարարելու։ Մենք անձեանք պտտելով Ղարսի ամբողջ չըջալկալը տեսնում, որ այդ պախտութիւնը ոչ միայն Սարի-Ղամիշը ունի, այլ այս ամբողջութեանը զուրկ ենք երեւոյնց աւելի գիւղեր, գաղթականաց թէ տեղային։ Իսկ Սարի-Ղամիշում, որտեղ մենք շարժվեցինք ժամանակ հեռանցիկներ, երեք հարիւր հոգու անդամ չենք պատահել և այժմ իսկ պատկառ խանութ պաների 13 հոգի են, որոնցից միայն երեքը ընտանիքով են ապրում. բացի այս պատկառ 3 ընտանիքներին, կան և երեք զինարական պաշտօնեղ ընտանիքներ, որոնցից մէկն է մայրը Գովհաննիսեանը, որի ուղարկութիւնը ևս պ. թղթակցից դարձնում է այս ամբողջութեանը զուրկ ենք վրա։

Առ ի չը գուցէ արժանաւոր քահանայից հետեւեալ գիւղորդներ և զուրկ են զլսաւորապէս ուսումնարանից և քահանաներից, որոնց աւելորդ չի լինի մի-մի թուել այստեղ հաշուելով և տեսնել թիւը ի դիտութիւն հասարակութեան և հոգեւոր կառավարութեան. Ղարսի վիճակ. Դեօլը Եւդու 55 տուն, Մեօղլիս 26 տուն, Բրուս

Մեօղլիս 15 տ., Զերզան 35 տ., Ղաթանլու 27 տուն, Խաւ-Պիլիս 12 տ., Զայմ 25 տ., Աղջայ-Ղաթայ 27 տ., Մանթար 18 տուն, Քէրս 40 տ., Զիրի-Գիւղ 17 տ., Ղոշա-Քիլիս 26 տուն, Դատան 15 տ.։ Դժուար է Գիւղ-Տէրան, (չը գիտեմ աների թիւը), Թէգէնեղ 17 տ., Մարէշ 24 տ., Կարմիր վանք 12 տ., Գեօղիսանէ 35 տ., Սոխումլու 12 տ., Ռուսթ գիւղ 22 տ.։ Օւլիս. Կարկա 12 տ., Խորեզ 15 տ.։ Արդու ինչ *). Աղալէն (չը գիտեմ), Մահմեդաւոր (չը գիտեմ), Տանձաւ-գիւղ 72 տ., Խնայ 10 տ.։ Դատաւ չէ թէ Սաթլէ 15 տուն և այլն և այլն։

Թէ և մի քանի գիւղերում կան քահանաներ (Աստուած քահանայ համարէ), որոնք ըստ իւրեանց կարողութեան կարողանում են կառավարել ժողովուրդը ժամանակակից միայն, իսկ ուսումնարան ունենալը նորանց համար դեռ մահացու մեղք է համարվում։ Գալով Սարի-Ղամիշին, թէ վերջինս ոչ եկեղեցի և ոչ ուսումնարան ունի, դա ևս նրա համար է, որ 13 խանութպանների և երեք մասնաւոր ընտանիքների ութից թէ և բարձր չէ ունենալ մի փայտաշէն փոքրիկ եկեղեցի, սակայն առ այժմ ուսումնարանի պէտք բոլորովին չը կայ, որովհետեւ երկաթը չը կան, և դասներն էլ շատ փոքր, իսկ տուն օրերին սրբազան Աղտանեանը այդ փոքրիկ հասարակութիւնը ևս առանց մեթիքներու չէ թողնում, մօտակայ գիւղի քահանայի այցելութեամբ, որը կատարում է կրօնական ծէսերը մայրը Գովհաննիսեանի տանը, որով Սարի-Ղամիշից քահանային ևս դժայնում են ըստ իւրեանց կարողութեան։ Տիրու, Բաղաբան, Դաւիթեան, Ղաթաբաղ կայ մի-մի քահանայ, Մեքի, Կաղզուան, կան հինգ-հինգ քահանաներ, սորանք բոլորն էլ իրենց գործակալ են համարում (տար Աստուած, որ դործ կատարող լինէին) բայց ինչ արած, որդում լինելը, բայց «խոտհանցող», «պարեգայից», իրենց անունը ստորագրել անգամ չը գիտեն։ Յիշեալ գիւղերից առանց քահանայի կամ ուսումնարանի մնալու պատճառը սրբազան առաջնորդը համարում է այն, որ արժանաւոր ձեռնադրելիք քահանայացուներ չը կան, իսկ արժանաւորները խորհում են այդ պաշտօնից, ուրեմն ինչ իրաւունքով մենք կը գտնեալանք թէ մեր գիւղացիք յիշար են, անկերկան են, անբարոյական են, աղքատ են, ստորակ են վախառուներ, կորցրել են իրենց համեմատութիւնը և այլն և այլն։ Խօսք չը կայ, թէ մի ժողովուրդ, որը դարձել է վեր իր գոյութիւնը պահպանել է կրօնականների շնորհիւ և որը այժմ իսկ կուրծին հաւատ է ընծայում իր կրօնաւորին, զրկելով արժանաւոր քահանաներից՝ պէտք է որ կորցնի ամեն ինչ։ Եթէ մի բարձր ուսում առած արհեստագետ երիտասարդ համարձակվի ժողովուրդին քարոզելու մի նորութիւն, որը ապահովացնէր գիւղացու բազմակրօնների պիտոյքը, դարձայնէր երկրագործութիւնը, այդպիսին կը հաւանքվի, ինչպէս, ասում են, «փարմասոններ», իսկ նրա քաւորը իբր աստանայական մի ճանապարհ, և հա-

*) Արդուին գլխաւորապէս Դատաւի գիւղացիք համարեալ բոլորովին մոռացել են իրանց մայրենի լեզուն. նրանք տաճիկերն են խօսում, ինչպէս Վրաստանի մի քանի հայ գիւղացիք բոլորովին վրացիներն։

կառակ դէպքում, նոյն անձը եթէ մանի նոյն իսկ ժողովուրդի մէջ, քահանայական դիմակով, նա կրնա դռնի իրեն ատուածաբան, իսկ նրա քաւորները իբր Աստուծոյ խօսք։ Հիմաւորք քաւորացիները, քաղաքացիներ, աշխարհայէն, հարուստ քահանաների արժանաւորութիւնները դեռ ժողովուրդը չէ մոռացել. ժողովուրդի անկեղծ համակրութիւնը դէպի քահանաները դեռ մնում է. դժբաղդաբար ժողովուրդը նոյն քահանաները չունի։ Քահանան, իբր ժողովուրդի հայր, հաշտութեան միջնորդ, հովիւ, գիտող ամեն գաղտնեաց, կարող է շուտով համակրելի, սիրելի, յարգելի ու բարի օրինակ դառնալ ժողովուրդին։ Յիշեալ գիւղացիք պատրաստ են իրենց նորից քահանաներին նոր կարգադրութեամբը գիւղացիք ամեն տարի խոստանում են իրենց եկամուտից քահանային բաժին հանելու, օրինակի համար, իւր, պանիր, ցորեն, դարբ և բացի սորանից իր ծխակատարութեան շնորհակալելը, քահանան կունենայ սեփական վարելահող, կարող է դոգաւցաբար գիւղացու հետ անասուններ ունենալ և վալելու այն, ինչ կը վարեցին մարդուն։ Համարտը պէտք է ամեն յատկութեամբ գերազանցում են քաղաքի օղիք, ջրից և այլն։ Մենք հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ սրբազան Աղտանեանը առձեռն պատրաստում է մի ծրագիր, քաղաքացի և գիւղացի քահանաների ըստ տեղային կարողութեան ուժիկ նշանակելու, որով առաւել կը բարաւելի քահանաների գրութիւնը։ Մենք յուսով ենք, որ սրբազան առաջնորդը կը գործէ, կը բարաւելէ թէ գիւղացու և թէ քահանաների վիճակը, եթէ յանձնառու լինեն դարձապէս երիտասարդներ քահանայութեան պաշտօն վարելու, գէթ չլքված նայ ճեմարանի և Ներսիսեան դպրոցի աշակերտներից, իսկ մի ձեռք ծախ չի տալ, ինչպէս ասում է ժողովուրդական առածը։

Գիւղացու կարծիքը կաթողիկոսի անձնաւորութեան մասին։ Մենք մարդը մեծ գործ կը կատարէ. մի ազգ կառավարելու համար մի ազգի խելք պէտք է ունենալ. եթէ մէկը դարձնութիւն արած լինի Հնդկաստանում, նոյնը հեռանալով Հնդկաստանից կարող է դարձնութիւնը շարունակել և Ռուսաստանում, ընտելութեան տեղը փոխելով արհեստը նրանից չէ կարող հեռանալ։ Ներսիս Պատրիարք և Նորման Հայրիկ ազգ կառավարող արհեստաւորներ են. նորանք, ինչպէս մեծ մարդիկ, վայելել են ամբողջ ազգի համակրութիւնը և սէրը. նորանք մեծ մարդիկ են և մեծ գործ կը կատարեն, առանց մեր օժանդակութեան, և կը կատարեն եթէ ազգը օգնէ նրանց։ Ամօթ, հազար ամօթ մեր ազգութեան, եթէ մենք այս դարուս կոյր մնանք, սեր սպիտակից չը ուրեցնէք։ Գարեբ կանցնեն, բայց մենք Ներսիս և Հայրիկ չենք ունենալ։

Ղարս-Միլիք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նոր Վարի» մէջ ապակ է մի նամակ Թաւրիզից, որի մէջ ասված է որ իբր թէ «Մշակի» խմբագրութիւնից ստացվեցան այդուհի նամակներ, ո-

ուղղում անպահովացնել իմ կուսակցութեանը։ Պարզ է, որ առաջին դիպուածում իմ արարքը ստորութիւն է, արժանի անարգանքի. երկրորդ դիպուածում ես դործում եմ միասնական իրաւացիի հերքումը։ Մի այլ օրինակ։ Ես կամենում եմ, դիցուք, որ Ներսիս ընտրվի կաթողիկոս։ Ես քակտում եմ արքայազանի անունը։ Ամեն տեղ խօսում եմ, գրում եմ նրա անձնաւորութիւնը, ճշգրտութեամբ։ Աշխատում եմ ցրուել նրա վրա եղած թիւը կարծիքները։ Զերմ կերպով արձակելում եմ Ներսիսի հակառակները կարծիքները վրա, և միշտ աշխատում եմ ամենքի համակրութիւնը ուղղել դէպի Ներսիս։ Ես անուղիւս առաջ բերելով դէպի ուրիշները։ Ես համոզված եմ, որ ոչ մի խեղացի մարդ իմ արածը վնասակար չի համարի. և չի ասի որ այդպիսով ես գրգռում եմ ժողովուրդը և ընտրողական գործի պատիւը վայր եմ դրում։ Հակառակ խօսող պարոնները պիտի յիշեն, որ դեռ մեր ժողովուրդը ինքնուրոյն դործել չէ կարող։ Այդպիսի կուսակցական շարժումները ընտանական ուղղութեան երեւոյթներ են լուսաւոր ժողովուրդից մէջ, որտեղ ամեն մէկ քիչ-շատ յայտնի մարդ ունի իր կուսակցութիւնը, իր օրգանը և այլն։

Այն արդէն ուրիշ բան է, եթէ օրինակ, մէկը

ցանկանալով ընտրվել մի ընկերութեան անդամ, նախօրոք դէմ—դէմ է ընկնում, թող է փշուր, արքանեաններ է որսում, դուռը նրանց խոտհանքներում է և կարողանում է շատ ձայներ ցոյց տալ.—այդ կը նշանակի «նպատակը սրբում է միջոցը».—այդ անձնական է. այդպիսի կէտից կալմամբ կուսակցութիւնը շարունակ է։ Ասացէք, ինչպէս, որ խելքը գլխին մարդը իմ կուսակցական շարժումը վնասակար կը համարի, եթէ ես հասարակութեան մէջ քարոզեմ, օր. մի վարժապետի կամ մի հողաբարձուի անպատկառութեան դէմ, ցոյց տալով դառնող վնասակարութիւնը դործի համար, լինի դա միայն անդամ անհաճելի մի քանիսն։ Այդ արդէն այն չէ, որ մեր գիւղերում, շատ անգամ իրանց «խեղ» կարծող երիտասարդներ, անգործութիւնից այս ու այն կողմ ընկած, պատճառներ են որոնում վնասելու զանազան անձնաւորութեանց անուանը, դործն լուս.—այդ ի հարկէ պառակաւ մի պարագամբ է, որի օրինակները մեր գիւղական չըջանի մէջ շատ կարելի է տեսնել։ Համոզմունքի վրա հիմնված կուսակցութիւնը կանգնի նշան է... Միթէ, օրինակ, ես վնասակար կը լինեմ (շատերի կարծիքով) եթէ, օր. չը համակրեմ «Մեղուի», «Նոր-Վարին», քարոզում եմ դրանց վնասակար

մտքերի դէմ, կազմում եմ կուսակցութիւններ, իմեք դրանց դէմ, և միայն անգամ արգելք եմ լինում դրանց տարածելուն, ինչպէս, միւս կողմ մից օր. ես կաշխատեմ բարձրացնել «Մշակի» անունը, շատացնել նրա համակրողների թիւը, կաղմել «Մշակի» մտքերի պաշտպան խմբեր, եթէ ինքս համակրելիս լինեմ «Մշակին»։ Եթէ ես սիրելի համակրեի բոլորը, բոլորին, այն ժամանակ դուրս կը դար, որ ես սիրում եմ և լաւ և վատ, և սեր և սպիտակ, և այն ժամանակ ինձ համար իրաւացի կառէին.—«անկարելի է խառնալ սա ինչ մարդ է»։ Տարաբաղաբար մեր մէջ շատ այնպիսի մարդիկ կան, որոնց համար կարելի է ասել.—«անկարելի է խառնալ սա ինչ մարդ է»։ Բայց պարզ է, որ մեր մէջ ընտրողական գործի այնքան անպաշտ հետեւները պտուղ է ընտրողների անձնաւորութեան և սխալ հայեցողածներից։

Հայ մարդը առհասարակ ձգտումն ունի հասարակական գործերի համար ընտրել «եւթ մարդ», որի մեծ ու թիւնը հիմնված է գլխաւորապէս մեծամասնութեան կարծիքով փոքր փոխներ, կառակատարներ, ընկերութեան անդամներ զլսաւորապէս հարուստներից, առանց քննե-

լու թէ արդեօք մտադրով հարուստը խելքով և սրտով էլ հարուստ է... որովհետեւ միւսն օրս ոչ ոք չէ կարողացել մեծաւրից խելք և սիրտ չինել... Ինչ կարող են ասել, որ մեր մէջ, առ այժմ ի հարկէ, հարուստ մօտ կայ և վարէ։ Ես ընդգէմ չեմ. վարել ունի արժեք. բայց վարել էլ առանց կամքի, առանց համակրեան, առանց եւանդի, առանց ձգտման ոչինչ է։ Կամ թէ վերջապէս տեսնում էք, որ քաղաքում ընտրում են մէկին «անդամ ընկերութեան», կամ Պոլսում «ազգային երեսփոխան».—այդ զլսաւորապէս հիմնված է կամ անձի հարուստութեան վրա, և կամ մի այլ յատկութեան վրա, որ մեր մէջ ասվում է «խոտէլիկեցիկ» կամ «ազգային գործիչ», ինչպէս ասում են սյուսեցիք, և այդ էլ կայանում է գլխաւորապէս նրա մէջ, որ այնպիսիք միշտ խօսում են Հայկական հարցի վրա, ստանում են հայ լրագիր, գրում են յօդուածներ հայերէն, քննում են այս կամ այն մարդուն, կամ գրում են մի գիրք, մի քննադատութիւն, մի գիւղիկ պատմութիւն, մի անհիմն ըրեականութիւն, և կամ քանի մի անհամ ճաւեր, և կամ թէ ընտրողները ունեն ի վերջոյ շատ ծանօթներ, արքանեաններ, «խնամիկներ»... Այդ ի հարկէ միմիայն ցատակ է։

(Կը շարունակվի)

րոնց մէջ խմբագրութիւնը յորդորում է թափափա-
քանակ հայերին փող և ընծաներ ուղարկել Բաքիի
յօթելեանին: Հարկաւոր են համարում դրսեւ
«Նոր-Պարի» կամ նրա թղթակցի գիտակցական
թէ անդիտակցական այդ սխալ լուրը: «Մշակը»
երբէք նամակներ չէ գրել ոչ մի տեղ Բաքիի
յօթելեանի առիթով այլ այդ յօթելեանը պատրաս-
տող մի յատուկ յանձնաժողով կայ, որ և ուղար-
կում է իր կողմից նամակներ:

Այն հեռագիրը, որ ուղարկեցաւ Ներսէս պատ-
րիարքին թիֆլիսի հայ վաճառականների կող-
մից, ստորագրեցաւ 300 ստորագրութիւններով:
Այդ հեռագիրն Ներսէս սրբազանը այդպէս պա-
տասխանեց նոյնպէս հեռագրով: «Ձեր զգացմանց
համար շնորհակալ եմ, բայց ես տկար եմ և ան-
կարող: յայտնեցեք իմ օրհնութիւնս օրհնակ վա-
ճառականներին. Ներսէս»: Մենք կարծում ենք,
որ Ներսէս սրբազանը դեռ շատ երիտասարդ է,
որպէս զի հրաժարովի աղբիւր և եկեղեցւոյ ծառա-
յելուց: Մարդը ինչքան և տկար լինի, չը տեղե-
ք է հրաժարովի հասարակութեանը ծառայելուց տը-
կարութեան պատճառով:

Շնորհակալութեամբ տոնացանք պ. Քլարեճեանին
նրա հանած ֆոտոգրաֆիական պատկերը Պաշա-
տանաց պալատի Անիոմէ Գա մի շատ գեղեցիկ
ճարտարապետական շինութեան է, որ վկայ է հին
Հայաստանի յիշատակարանների գեղեցկութեան:
Ոչ միայն ամեն մի հայի համար, բայց և ամեն մի
օտարագրի ճարտարապետի համար այդ պատկե-
րը իր նրբութեամբ և գեղեցկութեամբ շատ թանկ
կարող է լինել:

Русский Курьер» լրագրի մէջ կարդում ենք.
«Ֆրանսիական ինժեներները, որոնք հետազոտու-
թիւններ էին անում Կովկասում, թիֆլիսի, երե-
ւանի և Գաղաթանի նահանգներում գտան
ծծումբի հանքի անաղին սլաշարներ: Որպէս յայ-
տնի է, ծծումբը քիմիական արդիւնաբերութեան
ամենապիտան և շարժիչներէն մէկն է, որովհետեւ
ծծումբից ստացվում է ծծմբաթթիւն, որը իր հեր-
թում ծառայում է սօդա պատրաստելու համար:
Ի նկատի ունենալով, որ ներկայումս մեր քիմիա-
կան գործարանները կախված լինելով խտա-
կան բերովի ծծումբից, չեն պատրաստում սօդա
և քիմիական այլ նիւթեր թանկ նստող ծծմբա-
թթիւն: Այս պատճառով, պետական կայքերի միջոցով
Օտտրոփիկի նախագիծ է կազմում Կովկասում և
դեռ ծծումբի հարուստ հանքերը մշակելուն նը-
պաստելու համար: Մենք լսել ենք, որ մտադրու-
թիւն կայ օժանդակութիւն տալ այն անձանց, ո-
րոնք կը ցանկանան մշակել ծծումբը Կովկասում»:

Նոյն լրագրի մէջ կարդում ենք. «Այլ ևս առաջ
ունենալով այն հանգամանքը, որ կօնորդաբանային
չարժուր Ազովիան ծովի վրա ներկայումս հարա-
ւարման և հարաւային երկրներում առևտրի
չընթանալու համար չափազանց անբնական
գրութիւն է տեսնել և պետութիւնը տարեկան
տասնեակ միլիոններ վնաս է կրում, կառավար-
չական շրջաններում հարց է յարուցված այդ չա-
րիքը խիստ միջոցներով թուլացնելու համար:
Այդ միջոցներից մէկը համարվում է Ազովիան
ծովի փակելը օտար նաւերի համար: Ազովիան
ծովը օտար նաւերի համար առաջին անգամ փակ-
ծովը օտար նաւերի համար առաջին անգամ փակ-
վեցաւ 1815 թվին, երբ թիւրքերը ցոյց տուցին,
որ ռուս վաճառականները սնանկացան երկու հ-
րեք ամսով ընթացքում, իսկ ազգաբնակչութիւնը
կատարելապէս աղքատացաւ: Տեղեկանալով այդ
բանը, Ալեքսանդր I կայսրը արգելեց մշտապէս
կարանտինի այդ եղանակը: Բայց մի և նոյն ժա-
մանակ Ազովիան ծովափնայ ազգաբնակչութեան
այդ տխուր գրութիւնը ստեղծվեցաւ փախազրոյ
հաւատարմի բացակայութիւնից Ազովիան ծովում
օտար նաւերի վրա բռնները փոխադրելու հա-
մար»:

Կիրակի, մարտի 18-ին կայացաւ թիֆլիսի փոխա-
դարձ կրեդիտային ընկերութեան անդամների ընդ-
հանուր ժողովը: Ընկերութեան խորհրդի առաջադ-
րութիւնը՝ կրկնապատկել անդամային վճարը, ըն-
դունակեցաւ ձայների մեծամասնութեամբ: Խորհ-
րդի ղեկավարները ընտրվեցան պ. Մէլք-Կարա-
կոզով և Ա. Տէր-Աղայով: Դրանցից առաջինը ըն-
տացաւ 302 սպիտակ և 138 սև քուէ: Դիրէկտոր
Աբ. Յովհաննիսեանը կրկին ընտրվեցաւ առանց

քուէարկութեան: Քննող յանձնաժողովի անդամներ
ընտրվեցան Իգնատի (288—152), Գարսեմ
(279—161), Տէր-Ալեքսանդր (240—200) և Նը-
րանց կանդիդատներ Գոլովանով (299—211) և
Տուրկովսկի (225—213):

Բազուից «Новое Время» լրագրին գրում են
հետեւեալը. «Ի հերքումն այն հեռագրի, որ հա-
ղորդել է Հիւսիսային հեռագրական գործակալու-
թիւնը մայրաքաղաքի քաղցրներին այն բանի մա-
սին, թէ կովկասեան մասնաշաղկանները իր թէ
անհամակրութեամբ լեռնաբերվեցան իրանց վրտու-
րագրութիւնից ազատվելու գործին, մենք, որպէս
Բազուի մասնաշաղկան հասարակութեան հաւա-
տարմանորներ, նրա յանձնարարութեամբ, խնդ-
րում ենք. «Ноб. Вр.» լրագրի խմբագրութեանը
տպել, իսկ մնացած լրագրներին խմբագրութիւն-
ներին արտատպել, որ մասնաշաղկանները, որպէս
անպատրաստներ զինուորագրութեան համար,
ընդհատակն մի ջն ուր դուռ է իր և ազատ է և
իւրանց այդ զինուորագրութիւնից և
այսօր մասնաշաղկանները բազմութեամբ մղկթիւնե-
րում աղօթում են Ամենաբարձրեալի մօտ մեր
Մեծ Թաղապարի բարօրութեան համար, որ տուցն
մեզ այդ շնորհը: Բազուի մասնաշաղկան հասարա-
կութեան հաւատարմութեան համար, որ տուցն
Մէլք-Մուստաֆա-Օղլի և Աղա-Ալի-Ռէշադ Օղլի»:

ՇԱՄԱԽՈՒՅՑ մեզ գրում են, որ այնտեղի բան-
տում տարափոխիկ հիւանդութիւն է տարածված
և բազմաթիւ բանտարկեալներ զոհ են գնում մի-
նը միւսի ետեք:

Նոյն տեղից մեզ հաղորդում են հետեւեալը.
«Այս ամսին եկաւ Շամախի մեր քաղաքի նոր
նշանակված դատաւարը, որը, ինչպէս լսում
ենք, շատ գործունայ մարդ է: Գալուն պէս,
դատաւարը պօլիցիականներին հրաւիրելով իր
մօտ, տուցն հարկաւոր պատկերները. հրամայեց
որ փողոցները մաքուր պահեն, պակասեցրեց առա-
ջին հարկաւորութեան միջոցների գները, օրինակ,
ոչխարի միսը, որ ծախվում էր ֆունտը 12 կ.
այժմ ծախվում է 8 կօպէկով, առաջին տեսակ
ալիւրի պուրը, որ ծախվում էր 1 ր. 20 կ.,
այժմ ծախվում է 1. 10 կօպէկով և այլն. այդ-
պիսով օրից օր ամենայն բան կարգի է ընկնում:
Հրաւիրում ենք ոտնիկանապետի ուղադրութիւնը
մանրակազմակերպի կշեռքների վրա, որոնցով քիչ
չեն վնասում մարդկանց»:

ԹէՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ մեզ հաղորդում են
հետեւեալը. «Մի զարբաղից հայ, Գրիգոր Միւր-
դանց, 20 տարուց աւել է, որ Շամախի—
թիւրմալ ասլան գիւղում, որը թէմիր-Խան-Շու-
րայից 30 վերստ հեռավորութիւն ունի, իր սե-
փական ծախքով շինած խանութ և իջևան ու-
նէր, ուր ճանապարհորդները գիշերում էին: Միւր-
դանցի ծանօթները շատ անգամ նրան համո-
զում էին հեռանալ այդ վտանգաւոր տեղից,
բայց նա ընդ էլ ըստ: Ամսին 4-ին, գիշերը,
անյայտ աւազակներ մտնում են նրա տուն և չա-
րաչար տանջելով (մօտ 50 վիշք ունէր) սպանում
են նրան և նրա եղբոր որդի տասնամեայ երե-
խային, որին Գարաբաղից նոր էր բերել տուէր:
Գրիգոր Միւրդանցը ձուռարկապէս 50 տարե-
կան մարդ էր: Խանութի խուզարկելուց յետոյ,
բացի չարժական և անշարժ կայքերից, գտնում են
3000 ր. պատրաստի փող. միայն 800 րուրդ դու-
մարը, որը ծրարով պահած է ունեցել պահարանի
ետեք, չարագործները գտնում են և տանում: Ա-
ւազակներին դեռ ևս որոնում են: Ասում են, որ
նաչափիկը գիւղից է պահանջում: Այդ թշուառ
գոհը հայրենիքում ունի եղբայրներ և եղբոր որ-
դիք, թող նրանք օրէնքի համաձայն թղթերով
ներկայանան տեղւոյս գլխավոր նահանգապետին և
իրանց աղաքանի կայքին տրուպետին»:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի Նորաշենի ե-
կեղեցւոյ նոյն եկեղեցւոյ քահանայ Գրիգ. կրու-
ւելով սարկաւազի հետ, եկեղեցւոյ բակում գաւա-
զանով վիրաւորեց նրա գլուխը: Լսում ենք, որ
քննութիւն է սկսվել արդէն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՐԱՔԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՊԱՐԱՀԱՆԳԻՍԸ

Շարաֆ գիշեր մեծ պարահանդէս կը արուի ի
նպատակ մեր Հռոմէական եղբայր Բերալի Ս.

Յակոբ հիւանդանոցին և դպրոցին: Ազգային ե-
րեք պարահանդէսներէ վերջ չորրորդի մը յաւե-
լումն ամենեկին դժգոհութիւն չը պատճառէր քանի
որ յատկացած է այսքան սուրբ նպատակի մը:
Մեր երեք պարահանդէսներն արուեցան կրթու-
թեան դարգացման համար. մեր տարաբաղդ եղ-
բայրներն կարօտ են ինամոց և սփոփանաց, ու-
րեմն բնական է որ մեր չորրորդ պարահանդէսն
յատկանայ մարդասիրական այդքան մեծ նպատա-
կի մը: Ի ինք փտահոլութեամբ թէ՛ Պօլսոյ Հայք
պիտի փութան գործնական ապացոյց մը տալ ի-
րենց մարդասիրական և ազգասիրական զգացմանց,
միթիւարելով Բարեկենդանի աւուրց մէջ, թշուառ
և տառապեալ այնքան եղբայրներ:

Շարաֆ գիշերուան հանդէսն այժմէն մեզ գո-
հունակութեան առիթ կ'ընծայէ: Այդ գիշերն կա-
րող պիտի լինի միանգամ ևս փորձով ապացու-
ցանք թէ՛ ինչ որ ալ ըլլան Հայոց մէջ կրօնա-
կան բաժանումը, բայց և այնպէս եղբայրու-
թեան դադափարն բացարձակապէս կը տրիէ մեր
վրայ: Հայ ժողովուրդը կրնայ կրօնական բաժա-
նուններ ունենալ, բայց և այնպէս այնքան սկսած
է յառաջանալ քաղաքակրթութեան մէջ, որ թէ՛ և
կ'իյնայ իր խորհրդածութեանց առարկայ կ'ընէ
ազգային զարգացման կարևոր ստատիստիկ, և
կ'ուզէ ընդհանրական համոզում մը գոյացնել տալ
թէ կրօնը ինչ պաշտօն կը վարէ այդ ստատիս-
տիկ մէջ, բայց մինչև այս ինչոց լուծումը, որ
շատ երկար տարիներու կարօտ լինի թիւիս, ա-
մէն անոնք որ Հայուն անուն կը կրեն զիար եղ-
բայր կը ճանաչեն և միշտ պիտի ճանաչեն:

Քաղաքակրթութեան աղեկացութեան ներքեւ մեզ
կարելի էր ուրիշ կերպ ընթանալ: Ժամանակն
ու պարագային բաւական կերպարանափոխ ը-
րին մեր զանազան դադափարներն, և եթէ մեր
հարց քիչ շատ խեթ ակամբ կը նայէին միմեանց,
զի կրօնական բաժանումն ունէին, իրենց զաւակ-
ներն կը ժողովին մի և նոյն սեղանի շուրջը
միաբան կ'աշխատին աղբային բարոյական դար-
գացման: Գաղափարներու յառաջադիմութիւնը
շատ արագ եղած է մեր մէջ:

Հռոմէական և բողոքական մեր եղբայրք այս
ճշմարտութեան վերահասու եղած են, որոյ իբր
ապացոյց՝ նուիրած են միշտ իրենց փոթեւանդն
ապացոյցները: Ոչ որ կրնայ ուրանալ թէ
աշակցութիւնը ազգային կրթական գործոյն
հռոմէական և բողոքական Հայք մասնակցեցան
կը մասնակցին միշտ ազգային կրթական ընկե-
րութեանց բարգաւաճմանը: Ի նպատակ այդ ընկե-
րութեանց արուած պարահանդէսներն վայելցնին
հռոմէական և բողոքական Հայոց աշխատակցու-
թիւնը. օրինակ մը, չը տեսնա՞ք քանի անգամներ
Ազարեան Յովսէփ Էֆենդին, նոյն իսկ վերջին
անգամ, գանձապետ Միացեալ ընկերութեանց պա-
րահանդիսի: Ինչ աշխատութիւններ, ինչ յոգ-
նութիւններ յանձն չառաւ և Միացեալ-ընկերու-
թիւնը գիտեն թէ օրքան շնորհապարտ են Ազա-
րեան Էֆենդիին: Հարկ չենք տեսնել միառ. մի յի-
շատակել այն ամեն անուններն որոց աշակցու-
թիւնը վայելած են ազգային ընկերութիւնը:

Կրթութեան տարածումը համակէ, ուր որ ալ ըն-
նոյն ուրախութեամբ կը համակէ, ուր որ ալ ըն-
կերութիւնը ասպարէզ ընտրած լինին իրենց գոր-
ծունէութեան: Հիւանդ մը, ցաւազար մը, թշուառ
մը թէ Ս. Փրկչի Հիւանդանոցի մէջ հառաչէ, թէ
Ս. Յակոբի յարկին ներքեւ տառապի, ամենուս
օրտին մի և նոյն վիշտը կազդէ:

«Արեւը», որ ջանաց իւր պարտականութիւնը կա-
տարել Ազգանուէր Հայահեաց և Միացեալ Ընկերու-
թեանց պարահանդէսներու առթիւ, իրեն նուիրա-
կան պարտը մը կը համարի կոչում ընել Պօլսոյ
զգացմանց: Եւ շարաֆ գիշեր, Ս. Յակոբի տառա-
պեալ եղբայր միթիւարութեան արցունքներուն
հետ մենք ալ նոր հանդիպում ամրապնդեմք մեր
եղբայրական սէրը, որ կարի արդիւնաւոր եղաւ
այսքան տարիներէ հետէ:

(Արեւը)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Nord» լրագիրը խորհուրդ է տալի բոլոր
եւրօպական պետութիւններին զինաթափ լինել
այն հիման վրա, որ եւրօպական հանգստութիւնը
վերականգնված է: Մի լեհական լրագիր պատաս-
խանելով դրան ասում է, որ ոչ Ռուսաստանը, ոչ
Եւրոպական չեն համաձայնի այդպիսի քաղ-
անք, և ամենին զիտաւորութիւն չունեն զինա-
թափ լինել:

—Ս. Պետերբուրգից «Times» լրագրին գրում

են, որ Տաւանիէի մօտ տպաւորման լրա ան-
գլիացիներն արած յաղթութեան լուրը շատ լաւ
տպաւորութիւն գործեց Ս. Պետերբուրգի կառա-
վարական շրջաններում:

—Հոչակաւոր մարդաստան Գուգո Շէնի, որ
սպանել է չորս կանանց, և նրա երկու համախոհ-
ները՝ Շլոսարէկ և Կարլ Շէնի, մահուան պատժի
են դատաւարութեամբ: «Temps» լրագրի խօսքե-
րիայի ուղարկութիւնը, վերջացած է: Առաջինը
կախաղան կը բարձրանայ Գուգո Շէնի:

—«Agence Havas» հաղորդում է, թէ Լիսաբոն-
ում լուր է տարածված, որ իբր թէ կառավարու-
թիւնը կամենում է Ֆրանսիայի հետ բանակցու-
թիւններ սկսել մի դաշնագիր կապելու մա-
սին, որով երկու ազգերի կապուածների սահ-
մանները Աֆրիկայում ճիշդ որոշված կը լինեն:

—Ռուսաց քաղաքակրթութեան մասին Պիւր-
յում անգլիական լրագրի ժողովում յարուցված
վիճարանութիւններն առիթով, «Temps» լրա-
գիրը հեղինակն նկատում է, որ Անգլիայի դե-
րը այդ բոլոր հարցում շատ ցաւալի է: Ռուսաս-
տանը չարունակում է առաջ գնալ, և նրա իւրա-
քանչիւր արած քայլից Անգլիայում կարծես զարթ-
նում և հարցնում են. չէ՞ կարելի արդեօք
որ և է կերպ կանգնեցնել: Եւ պատասխանին չը
սպասած՝ կրկին անշարժութեան մէջ են ընկնում:
Ռուսաստանը մտաւ խիւղ: «Լա», պատասխանեց Ս.
Ջէմեան կառավարութիւնը. —միայն թէ նա ռուսաց
չը տայ Մէլքին: —Այժմ, երբ Մէլքին ևս ռուսաց
ձեռքին է, անգլիացիները պահանջում են, որ
Ռուսաստանը Սարակը չը գրաւէ: Նա պատ-
կանում է Պարսկաստանին և նրա անկումը հա-
մանիչ կը լինէր Ռուսաստանի յարձակմանը մեծ
պետութեան վրա: Դժբաղդաբար, հեղինակը ա-
սում է «Temps», —Ռուսաստանը կամենում է Վեդ-
լաքի վարչական շրջան հիմնել, որի մէջ կը մտ-
նի և Սարակ: Թող այդպէս լինի, միայն թէ նա
ձեռք չը տայ Հէրաթին: Լորդ Գրեյնիլը յայտնեց,
որ անգլիական կառավարութեան ցանկութիւնն
է, որ ճշտութեամբ որոշվին Ռուսաստանի, Պարս-
կաստանի և Աֆղանստանի մէջ եղած սահմաննե-
րը: Իսկ յետոյ ինչ կը լինի, հարցնում է «Temps»:
Եթէ Ռուսաստանը կը կռւի իր հարեանների հետ,
եթէ իրանը թուրքմէնները կը յարձակվեն իրանց
սահմանակից կապուածները վրա՞: Եթէ երկու տա-
րի արդէն Պարսկաստանը իր աղեկացութեան տակ
ունենալով Ռուսաստանը կը կամենայ հաստատ-
վել Քարեւելի մէջ ևս: Միակ նպատակադարմար
միտքը, որ յայտնել է անգլիական կառավարու-
թիւնը, այն է, թէ անհրաժեշտ է երկաթուղին
Հնդկաստանից շարունակել մինչև Կովկաս և մի-
ջոց ունենալ այգալիտով կրկին գրաւել Կանդա-
հարը, որը այդպէս անգղուշութեամբ դատարկ-
ված է:

—Վիեննայից «Journal des Débats» լրագրին
հեռագրում են, որ ռուսաց կառավարութեան ա-
ռաւարկութիւնը միջադրային միջոցներ գործա-
դրելու մասին անիշխանականներն ոչմ, չընդուն-
վեցաւ: Վիեննայի կառավարութիւնից, որը գիտա-
ւորութիւն ունի աւելի փափուկ միջոցներ գործ-
դնել, թղթակցի խօսքերով:

—Յունական պատգամաւորների ժողովում, որ-
պէս հեռագրում են Աթէնքից «Temps» լրագրին,
վիճարանութիւններն սկսվեցան թիւրքերի դրու-
թեան վերաբերութեամբ թեոլոլիայում: Վերոյի-
շալ նահանգի մասնատական պատգամաւորը բո-
ղոքում էր այն զեղծումների և անարդարութիւն-
ների դէմ, որ կատարում են տեղական վարչու-
թիւնները իրանց այն հաւատակցների վերաբե-
րութեամբ, որոնք մնացին սովորանի հպատակներ
Պ. Տրիկուպի պաշտօնապէս յայտնեց, որ այն
մասնաշաղկանները, որոնք ցանկացել են Բ. Դրան
հպատակ մնալ, չեն արքայով երկրից:

—Շուդոնից «Temps» լրագրին գրում են, որ
բոլոր Դեբբի փողերի ճառախօսութիւն արեց մի
մասնաւոր ժողովում: Նա ծաղրեց միջոցներ
հրաժարականի և պարլամենտի արձակելու լուրը:
«Լա» կը լինէր, աւելացրեց հետօրը, եթէ մենք
երբէք մտաւ չը գործէինք Եգիպտոս, բայց երբ
մենք արդէն այնտեղ ենք, մենք չենք կարող հե-
ռանալ, մինչև որ երկրի մէջ մշտական հանգս-
տութիւն չենք հաստատի, որ ինքն իրան հակա-
նալ է, այնպէս արագ չէ կատարվում, որպէս
ցանկալի է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՐ ԱՐԺՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՏԱՔԱՍՅՈՒՆ ԲՕԺՕԺՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ

Դեղին կոճենների տեսակից, պատրաստված է Պատեհորի սիտեմայով և ստացված է Ֆրանսիական առաջնակարգ ֆիրմաներից: Մեխանիկական զինք մի քանի է: Կան նոյնպես Նուսուտե տեսակից պատրաստված սերմեր— մեխանիկական 50 կոպեկով: Դիմել հետևեալ հասցեով: Պ. Լեբիսեն, Ֆրեյլինսայա փողոց, № 8, տուն Արտագովի, կամ Լուի մագազինում:

3—5

Պ. ԽՄԵԼԷՎՍԿԻ, որ փերձացրել է իր լիակատար ուսումը վարչակազմի կոնսերվատորիայում և Մոսկովի աշակետ է, մուգիկայի դասեր է տալիս դաշնամուրի և ֆիգուրանտների վրա, նոյնպես դաս է տալիս մուգիկայի տեսութիւնը, դարձնել (գեներալ բաս): Բնակվում է կաթողիկական եկեղեցու տանը Կուկիայում:

5—6

Մարտի 1-ին բացվում է

ԳԵՂԱՐՈՆՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ՀԱՆԴԵՍ

Մուտքը 20 կոպ.: Ուսանողներին 10 կոպ.: Երեքշաբթի բոլորի համար 50 կ.: Երևանեան հրապարակ, Դժակելի տանը:

2—2

2,000

ամենից ՀՈՋԱՎԱԾ բժիշկներ

տալիս

Դ. Կ. ՊՈՊՊԻ

ԳՏԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՏԱՄԵՆԻ ՀԱՄԱՐ

Երանդ և առամները պահանջելու այժմ դուրսիցն ունենցող որպէս ամենապատշաճ միջոցներ: 30 տարեկան ընթացքում փորձված

ԱՆԱՏԵՐԻՆԵԱՆ ԲԵՐԱՆ ՈՂՈՂԵԼՈՒ ԶՈՒՐ

Դ. Կ. Ի. Գ. ՊՈՊՊԻ ՎԻԵՆԱ-ՑՈՒՄ

Առաջին անգամ օրապատկան առամները, որոնք հաջորդում է առամները, բժշկական է հիշատակել ինքեքը, պահանջում է մաքրում է առամները, որոնք հաջորդում է լատ հոտը, թեթեւացում է մանուկների առամները, բուսանելը, պահանջում է միջոց է դիֆթերիա դէմ, անհրաժեշտ է համարել ջրեր գործածելու ժամանակ, միջոց արժէ 1 ր. 50 կ. կէս շիշ 1 ր. և 1/3 շիշ 60 կոպէս:

Առամներին փոշի խտրելից, արդէն կարճատե գործածութիւնից յետոյ առամները կատարելապէս սպիտակացնում է, չոր փշանցելով նրանց: Խորանշիտը կարողանի զինք 70 կ.:

Առամներին օժտելի պատառապակէ կարողանանում 1 ր. 20 կոպ., փորձված միջոց է առամները մաքրելու համար:

Առամներին անուշահոտ պատառաքանի ներքին մասը և առամները առողջ պահպանելու համար, մի կտորը արժէ 35 կոպ.:

Առամներին այժմ առամները դիմ միջոցը դատարկ առամները անձնապէս պարզելու համար: Փոքրիկ կարողանի զինք է 2 րոպ:

ՊՈՊՊԻ ԽՈՏԻ ՍԱՊՈՆ

Որքաններ, բշտիկներ, երեւի բծեր, երանդներ, կուտ մազերի և բուսանների, քսոր, ընդհանրապէս կաշու հիւսնաութիւնների և անուշաքութիւնների դէմ:

Մաքրում է թիֆիդում դեղատան ապրանքների առատորէ կովկասեան ընկերութեան մէջ:

(2—1)

50,000 ՖՈՒՆՏ և ծախվում է 25% էժԱՆ քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 2-կ., շատ լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ր. 40 կ., դեղադանց ՄՕՆԻՆԳ թէյ 1 ր. 60 կ. (այս թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր. 50 կ.), ԿԱՍՍՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ՖՈՒ-ՉԷ-ՖՈՒ թէյ 2 ր. Ֆոնտը քարը առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում է 500 ԵՐԱԹԵ ՄԱՀԱՅԱՆՆԵՐ 6 ր.—60 ր.: ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ մազերի համար: Երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ կովկասի համար, շոկոլադ ՖՐԱՅ, շէֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, հրացաններ ԴԱՌԻ, բէթովները ՎԵՐԱԼԻ, ԲԱՐՆԵՐԻ թամբեր, ԵՎԱՐՑԻ ալբոմներ: ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԸ զանազան է թիֆիսի մէջ, Գօրցովի փողոցի վրա Արծրունու գաղէթում: № 156 57, 158, 159, 160: Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԵՐԵՎԱՆԵՐԻ և տղամարդկանց մահճակալներ 25% էժան քան թէ ուրիշ տեղ 10% էլ զինքում:

15—100

ԱՄԵՐԻԿԱՆԿԱՆ

ՍՊԵՏԱԿԵՂԷՆ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԵՔԵՆԱՅ

Այդ մեքենայով լուսնալու ժամանակ սպիտակեղէնը աւելի երկար է պահվում, որովհետեւ կտաւը կտաւին չէ քայլում, որից սովորական լուսնի ժամանակ կտաւը բարակում է և պատռվում: Մի անգամ լուսնայով լուսնը կատարելապէս մաքուր է ստացվում, հետևապէս շատ քիչ սապոն և փառէլը է գործադրվում: Աշխատանքն էլ շատ հեշտ և արագ է կատարվում, այնպէս որ երեք անգամ քիչ աշխատող ձեռք է պահանջում: Մեքենան բարդորեալ չէ և շատ ամուր է: Նա միակերպ օգտակար է, ինչպէս մեծ և փոքր ընտանիքների համար, նոյնպէս և լուսնարարների համար, խրատները մանրամասն: Գործակալներ են հրաւիրվում: Հանապազմի համար ԳԻՆԸ 5 րոպ: Հասցէ: Агенты В. ИЛЕМЕН-ЗОНУ, ВЪ СИМФЕРОПОЛЕ.

4—5 (1)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԵՆԱԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգեհաւ "MINGRELIE" (ՄԻՆԳՐԵԼԻԵ), նաւապետ ՆԵԼ (Nel) կուղևորվի դէպի ՏՐԱՊԻՉՈՆ, Կ. ՊՈԼԻՍ և ՄԱՐՍԵԼ ֆոթիկից կերակրի օր, 25 մարտի, իսկ Բաթումից կերակրվի օր, 26-ին մարտի, եթէ եղանակը նպաստող լինի նաւազնացում թեանը:

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագէնտներին, ՓՕԹԻՈՒՄ պ. Գարաշիսին, ԲԱԹՈՒՄԻՈՒՄ պ. Հեթումեանցին և ԹԻՖԼԻՍԻՈՒՄ պ. Բընօին, Արծրունու գաղէթում: 1—5



ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԳՐԱԺԷ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է ԹԻՖԼԻՍԻՈՒՄ հետևեալ մազադիրներում: Գ. Մ. Կոպաձէի, Ս. Անիկի, Ա. Պ. Արցալովի, Վ. Ֆ. Սիտովի, Ե. Ա. Եղիազարովի, Գ. Ա. Բաւեադչիկի, Ս. Ա. Շոթիանովի, Յ. Ա. Բարանսովի, Յ. Ի. Գաբրէլեանովի, Ի. Ս. Եւանգուլովի և ուրիշ շատերի մազադիրներում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի միւս բոլոր քաղաքներում:

2—20 (15—30)

ՍՏԱՄՈՒՔԱՅԻՆ ՑԱԽԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ "ԲՈՒԴՕ"

Այս զինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ դործ է դրվում հետևեալ դէպքերում: ԱՌՈՐԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՒՔԻ ՑԱԽԵՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

Պէպսին "Բուդօ" ճանաչված է Փարիզի բժշկական Ախադէմիայից և ստացել է առաջին մեդալներ հետևեալ աշխարհահամերկներին՝ ՓԱՐԻՉԻ 1867 թ., ՎԻԵՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻՉԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria. Կովկասի համար պահեաւ. ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆԲԵՐԻ ԱՌԵԻՏԻ ԿՈՎԿԱՍԻՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ:

6—80 (Կ. շ.)



Յ Ո Ւ Յ Ա Կ

Գ Ի Ն Ո Ւ Ե Ւ Ս Պ Ի Ր Տ Ի Պ Ա Հ Ե Ս Տ Ի

ՄԻՒԱԻԼ ԱՆԴԻԷՎԻՉ

Պ Օ Պ Օ Վ Ի

ԱՅՐԻՒ ՕՂԻՆԵՐԻ ՇՈՒԿԵՆԱԹԱՅԻՆ

Մօակվա, Բալշոի Կամեննի կամուրջի մօտ, սեփական տուն:

Սեղանի զինի ՑԱՐՍԿՈՆ. Օ. որ պատրաստված է 1883 թ. թաղադրութեան համար 12 — 13 20
Բարձր տեսակի ՑԱՐՆԻ սեղանի զինի, № 1 (շիշերը ձիւթված) 8 90 9 90
Բարձր տեսակի սեղանի զինի, № 1, առանձին պատուէրով 8 90 9 90
Առաջին տեսակի սեղանի զինի, № 2 7 75 8 50
Երկրորդ տեսակի սեղանի զինի, № 3 (ձիւթված շիշեր) 6 80 7 40

Բացի յիշեալ տեսակներից պահանջի մէջ կայ երկու անգամ քաշված զինի 41° և մաքրված 40°, որ տակաւներով է ծախվում: Ամանները յետ են ընդունվում նախ գնով, որով ծախվում է պահանջը: Պահանջը ուղարկում է իր ապրանքները Ռուսաստանի բոլոր քաղաքները և արտասահման և փողերը կամ առաջուց է ուղարկվում փոստով կամ լուսնիկի միջնորդութեամբ, կամ վճարվում է ապրանքը ստանալուն պէս հետադարձ: Պատուէրները կատարվում են, երբ պահանջի պահանջվում է երեք վեդրոյից ոչ պակաս զինի: Մանրամասն ցուցակները ուղարկվում են անվարձ պահանջելուն պէս:

1-ին ՄԱՆՈՒԹԻԹԻՒՆ. Շատ անգամ պատահած դեղծումները և Մ. Ա. ՊՕՊՕՎԻ Ֆիրման Ի. Ա. Պոպովի ֆիրմայի հետ խառնելը և նկատի ունենալով որ մեղ հետ ոչինչ յարաբերութիւն չունի, գրանցեալը խնդրում է ուղարկվելու դարձնել մեղ նուիրած ՊԵՏԱԿԱՆ ՆԵԱՆԻ վրա և պահանջի գործիքների վրա և հարկաւոր ենք համարում յայտնել, որ զինին մաքրվում է առանձին գործարանի մէջ և պահանջի զինին քիմիական ուղին խառնուրդ չունի, որ լուսն և տալիս, բայց ձեւատմ է առողջութեանը:

2-դ ՄԱՆՈՒԹԻԹԻՒՆ. Հաւարակութեան մէջ փաղցուց բոլորի են տարածում, իրը թէ Մ. Ա. ՊՕՊՕՎԻ մահից յետոյ, գործերը յանձնվում են ուրիշ ընկերութեանը: Այդ բոլորը կատարելապէս հարկւած են: Գործը կատարում է Մ. Ա. ՊՕՊՕՎԻ ժառանգ նրա այրին, տ. Ի. Ս. Պոպովա և երեք ոչ որի չէ յանձնվում:

10—10 (1)